

**ՔԵՐՈՎԸՆ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Հ.Ժ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայագիտության մեջ Մկրտիչ Էմինի արժանավոր հետնորդն ու նրա գործի շարունակողը Քերովքե Պատկանյանն էր, որի հայագիտական գործունեության ամենից ընդարձակ բնագավառն, անշուշտ, պատմագիտական բնույթի ուսումնասիրություններն են¹։ Նրա հրատարակած պատմական բազմաբնույթ գրականությունը՝ թարգմանություններն ու հետազոտությունները նպատակ ունեին սրբագրել և մատչելի դարձնել հայ պատմիչների հաղորդած այն տեղեկությունները (V դ. սկսած մինչև XVII–XVIII դդ.), որոնք վերաբերում էին հայերի հետ դարերի ընթացքում առնչվող ժողովուրդների պատմությանը։ Պատկանյանն այդ հարցում փաստորեն մի քայլ առաջ գնաց իր ուսուցչից. եթե Էմինի համար կարևորություն էին ներկայացնում այն հայ պատմիչները, որոնք հայոց պատմությունը շարադրել էին հարևան երկրների պատմության հետ շաղկապված, ապա նա նպատակ դրեց ստուգաբանել ու ճշգրտել այդ տեղեկությունները։ Դրանով իսկ Պատկանյանը հայագիտությունը հարստացրեց նոր բովանդակությամբ. նա հայոց պատմությունը չնեղացրեց միայն տեղական նշանակության իրադարձություններով, այլ դրանք դիտեց տարածաշրջանի խնդիրներին համընթաց, մի բան, որն առավել գնահատելի ու ընդունելի էր եվրոպական և ռուսական պատմագիտական շրջանակների համար։

Պատկանյանն իր հետազոտությունների համար ընտրում էր հատկապես այն հայ պատմիչների աշխատությունները, որոնք քնչ-որ կերպ նպաստել են Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմության բաց թողնված էջերի լրացմանը։ Այդ նպատակով նա դեռևս 1861թ. ձեռնարկում է «Մասանյան դիմաստիայի պատմության փորձ՝ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների» ուշագրավ ուսումնասիրությունը, որի ներածականում պատշաճ գնահատելով հույն և արաբ պատմիչների հաղորդած տեղեկությունները Մասանյանների պատմության լուսաբանության խնդրում, նա միաժամանակ, իրավացիորեն գտնում է, որ դրանցում կան կարևոր բացթողումներ, ժամանակագրական անճշտություններ և մանապես այլ թերություններ, որոնք կարելի է ուղղել միմիայն հայկական աղբյուրների հիման վրա։ Ժամանակի առումով

¹ Զ. Պատկանյանը (1833–1889) սկզբնական կրթությունը ստացել է Լազարյան ճեմարանում՝ Մ. Էմինի անմիջական ղեկավարությամբ։ 1850թ. ավարտելով ճեմարանը՝ Պատկանյանն իր մի քանի հայագիտական ընկերների հետ մեկնում է Դորպատ՝ տեղի համալսարանում ուսանելու համար։ Մակայն շուտով, մի կողմից, նյութական միջոցների պակասությունը, իսկ մյուս կողմից՝ հոգևոր կրթության ձգտում չունենալը Պատկանյանին ստիպում են ժամանակից շուտ թողնել ուսումը։ Կովկասի ուսումնական օկրուգի ղեկավարության երաշխավորությամբ Զ. Պատկանյանը 1853թ. ընդունվում է 1857թ. ավարտում է Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը։ Որոշ ժամանակ Պատկանյանն աշխատում է Թիֆլիսում, ապա մեկնում է Պետերբուրգ և իրեն ամբողջովին նվիրում հայագիտությանը։ Այդ ժամանակից էլ սկսած՝ Պատկանյանը դառնում է գիտության անխոնջ մշակ և գրեթե յուրաքանչյուր տարի հրապարակում հայոց պատմության, գրականության և լեզվի հարցերին նվիրված ուսումնասիրություններ։

դա հայագիտական արժեք ներկայացնող դրույթ էր, որը մեկ անգամ ևս հավաստում և հաստատում էր հայկական աղբյուրների ճշմարտացիությունը:

Ք.Պատկանյանի հետազոտության շրջանակներում էր նաև մոնղոլական տիրապետության շրջանի Հայաստանի պատմությունը, ուր հեղինակը խնդիր էր դրել ի մի հավաքել հայ պատմիչների նյութերը: Մեկը մյուսի հետևից հրատարակվեցին հարցին վերաբերող մի շարք հոդվածներ՝ «Մոնղոլների պատմությունն ըստ հայ պատմիչների» ընդհանուր խորագրով: Այն ընդգրկում էր Մաղաթիայի պատմությունը, (1871թ.), քաղվածքներ Վարդան պատմիչից, Մտեփանոս Օրբելյանից, Սմբատ Գունդստարից (1873թ.) և Կիրակոս Գանձակեցուց (1874թ.): Հայկական բնագրերից կատարելով որակյալ թարգմանություններ՝ նա, միաժամանակ, դրանք ներկայացրեց արժեքավոր ներածականներով ու ծանոթագրություններով:

Այս աշխատանքներին զուգընթաց, Պատկանյանը հրատարակեց այն հայ պատմիչների ռուսերեն թարգմանությունները, որոնք արժեքավոր (նյութեր էին բովանդակում Բյուզանդիայի, Աղվանքի, արաբների և մյուս երկրների ու ժողովուրդների պատմության մասին: Դրանց մեջ հատկապես առանձնանում է Մեթոսի թարգմանությունը, որը ռուսերեն և ընդհանրապես այդ հեղինակին թարգմանելու առաջին փորձն էր: Այն հրապարակ եկավ 1862թ.: Նա առաջինը ձեռնարկեց նաև Մեթոսի լավագույն համարվող ձեռագրից հայերեն բնագրի հրապարակումը՝ 1879թ.: Դրանց նախորդել էին Մովսես Կաղանկատվացու (1861թ.) և Ղևոնդ պատմիչի (1862թ.) աշխատությունների ռուսերեն թարգմանությունները: Այս ամենը դեռ բոլորը չէ. ձեռնարկվեցին մի շարք հրատարակություններ, որոնց մի մասը իրականացվում էր առաջին անգամ: Իսկ եթե փորձենք ժամանակագրական կարգով դասավորել դրանք, ապա մեկը մյուսին հաջորդում են՝ Մխիթար Այրիվանեցին (1867թ.), Մաղաթիա պատմիչը (1871թ.), Անանիա Շիրակացին (1877թ.), Մխիթար Անեցին (1879թ.), Փավստոս Բուզանդը (1883թ.), հատվածներ հայոց պատմությունից (1884թ.) և վերջապես, Թովմա Արծրունին (1887թ.): Այս ուսումնասիրությունները լիովին բավարար էին Պատկանյանին՝ հմուտ հայագետի անուն վաստակելու համար:

Նրա ձեռնարկած ուշագրավ աշխատանքներից մեկն էլ «Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» մենագրությունն էր (Ս. Պետերբուրգ, 1881թ.): Աշխատության առանձին հատվածներ տպագրվեցին լուսավորության նախարարության ամսագրում՝ 1874–1881թթ.: Հարցն այն ժամանակ էլ դեռ շարժում էր գիտնականների հետաքրքրությունը, և, չնայած բազում փորձերին, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների զգալի մասը դեռևս չարոմանկում էր մնալ չվերծանված: Գիտակցելով դրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության ուսումնասիրության խնդրում՝ Պատկանյանը ռուսական գիտական հասարակայնությանը հանգամանորեն ծանոթացրեց, թե խնդրի առնչությամբ ինչ է արվել Արևմուտքում: Մյուս կողմից, ներկայացնելով արդեն վերծանված սեպագրերն ու դրանց բովանդակությունը՝ Պատկանյանը հանգում է մի ուշագրավ եզրակացության. այդ սեպագրերը, որոնք լույս են սփռում Առաջավոր Ասիայի շատ երկրների պատմության վրա, չէին կարող իրենց աղերսները չունենալ նաև հայոց պատմության հետ: Հեղինակն այստեղ իր տարակարծությունն է հայտնում Խորենացուն՝ համեմատության մեջ դնելով, մի կողմից, Պատմահոր, մյուս կողմից՝ հնագիտության և լեզվաբանության նորագույն հայտնագործությունները: Իհարկե, Պատկանյանն այստեղ ընկնում է չափազանցության մեջ. հարկ էր, որ այդ տվյալները նա նախապես քննարկեր

և պարզեր թե արդյո՞ք դրանք ուղիղ կապ ունեն հայոց պատմության հետ: Այնուհանդերձ, հեղինակը կատարում է իր գիտական արդյունավետ եզրակացությունը: «Մինչ օրս,—գրում է նա,—ասորական շրջանի հայոց պատմությունը մեզ ներկայանում է լիովին այլ տեսքով, քան այն իրականում եղել է: Հայաստանը կարծես ապրել է մեկուսացած, իր նահապետական կյանքով և ոչ մի մասնակցություն չի ունեցել այն իրադարձություններին, որոնք մ.թ.ա. X–VI դդ. անհանգստացրել են ողջ Ասիան: Մինչդեռ, նոր հուշարձանները, որոնց թիվն օրեցօր աճում է, մեր առջև բացում են Արևելքի պատմության մոռացված էջերը, շարժման մեջ դնում այն ժամանակաշրջանը, որը մեզ թվում էր մեռյալ և անշարժ»:

Պատկանյանն այնուհետև, հիմք ընդունելով ժամանակի պատմագիտական նորագույն տվյալները, հանգամանալից քննադատում է Մովսես Խորենացու պատմության հին շրջանի համար գլխավոր աղբյուր ծառայած Մար-Աբաս Մծուրնացուն, թեպետ վերջինս ժամանակագրական առումով երկրորդ դարից անհաբեկի հեռացված է մինչև III–IV դար: Չմոռանալով նաև, որ այս գիրքը հետագայում քննադատության արժանացավ օտար հայագետների կողմից²: Այնուհանդերձ, ուշագրավն այստեղ այն է, որ Պատկանյանն անձամբ համառորեն ուսումնասիրում էր այդ արձանագրությունները. նա նույնիսկ կապեր հաստատեց անգլիացի նշանավոր վերծանող Մեյսի հետ:

Պատկանյանի պատմագիտական ուշագրավ հետազոտություններից է նաև «Հայ պատմական գրականության մատենագիտական ուրվագիծ» աշխատությունը, որը լույս տեսավ 1880թ., Ս.Պետերբուրգում: Թեպետ և վերնագիրը մատենագիտական բնույթ ունի, սակայն հեղինակն այստեղ լրջորեն քննարկում է ավատատիրական Հայաստանի պետական-քաղաքական կառուցվածքը: Նա համոզված նշում է, որ թագավորական իշխանությունը Հայաստանում հաստատվել է «ոչ թե գիտակցված քաղաքական անհրաժեշտությամբ, այլ հայոց իշխանների վրա արտաքին ուժի գործադրած ազդեցության ճանապարհով, կանխավ համոզվածությամբ, սակայն, որ նրանց իրավունքները չեն սահմանափակվի: Եվ իրոք, թագավորների առաջին գործը եղավ հաստատելու նախարարների և իշխանների ունեցած բոլոր իրավունքները»³:

Այստեղից էլ Պատկանյանի եզրակացությունը. «...Հայոց թագավորներն իրականում չունեին այն անսահմանափակ իշխանությունը, որից օգտվում էին, օրինակ, հարևան պարսից թագավորները՝ իրենց պատմության ողջ ժամանակաընթացքում: Հայ հզոր նախարարությունը միայն առանձնապես եռանդուն թագավորների օրոք ենթարկվեց նրան և կատարում էր արքունի հանձնարարությունները, իսկ թույլ թագավորների օրոք նրանք գրեթե անկախ են ապրել»⁴: Շարունակության մեջ, սակայն, հեղինակը թույլ է տալիս լուրջ վրիպում. ասել, թե «Թագավորական իշխանության գոյության 500 տարուց ավելի ժամանակաընթացքում իշխաններն այդպես էլ չհամակվեցին ազգային և քաղաքական շահերի գիտակցումով և այդ իշխանության մեջ տեսնում էին

² Տե՛ս К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб., 1881, с. 69.

³ Տե՛ս М. Нейман, Армяне. Краткий очерк их истории и современного положения, СПб., 1899.

⁴ Տե՛ս К. Патканов, Библиографический очерк армянской исторической литературы, СПб., 1880, с. 15–16.

⁵ Նույն տեղում, էջ 4:

միայն հոգս ու օգտակար ոչինչ»⁶, նշանակում է՝ նսեմացնել այն դերը, որ կատարել է հայ նախարարությունը՝ հայոց պատմության համար բախտորոշ ժամանակներում: Անշուշտ, իրավացի էր Պատկանյանը, երբ պնդում էր, թե նախարարները հնարավորություն չընձեռեցին Հայաստանում թագավորական ուժեղ իշխանության: հաստատմանը, սակայն հայրենասիրության բացակայության և քաղաքական տհասության մեջ նրանց մեղադրելը, կարծում ենք, սխալ է: Սակայն դա՝ ինքնակաշի համոզմունքն է, և իր ասածը հիմնավորելու նպատակով նա բերում է փաստեր, որոնք, ճիշտ է, ամբողջովին ընդունելի չեն, սակայն դրանցում ճշմարտություն, իհարկե, կա: Հայագետն, օրինակ, իրավացի է, երբ գրում է, թե Հայաստանի հարևաններին մշտապես շահավետ է եղել երկրի այս վիճակը, որպեսզի «թույլ չտրվի հայկական հզոր թագավորության ստեղծումը»: Պատկանյանը դրանով է բացատրում հայկական թագավորությունների թույլ վիճակը և քաղաքական այն աննշան դերը, որ խաղացել են հայերն իրենց անկախության տարիներին: Հեղինակն այնուհետև գրում է, որ հայոց թագավորական իշխանության վերացման գլխավոր պատճառը պետք է համարել երկրում այդ հաստատության ոչ ժողովրդականությունը⁸:

Առաջին հայացքից այս հաստատումը թերի է թվում և նույնիսկ անիրական, սակայն Պատկանյանը շարունակում է հետևյալ կերպ համոզել ընթերցողին. «Եթե թագավորական իշխանությունը ժամանակին մտահոգվեր ժողովրդի կարիքների մասին կամ էլ հասցներ արմատներ գցել նրանում, ապա անխուսափելի կլինեին այն վերականգնելու փորձերը: Սակայն այդպիսի ձգտումներ ընդհանրապես չեղան և ասպարեզից հեռացավ միայն արհեստականորեն ստեղծված իշխանությունը... Հայաստանին նորից տիրացան իշխան-նախարարները...»: Հեղինակն այսպիսի համեմատություն է կատարում. «Այնչ թագավորական շրջանում հայկական ցեղերը բազում դարերի ընթացքում կարողացան պահպանել իրենց անկախությունը և հաջողությամբ դիմակայում էին օտար նվաճողներին՝ ժամանակ առ ժամանակ միայն ընդունելով պարսից թագավորների գերիշխանությունը: Հետագայում, սակայն, հանգամանքները փոխվեցին... իշխանները կորցրեցին իրենց բարեմասնությունների մեծ մասը, արտաքին հարցերում նրանց մեջ կորավ միասնականությունը, որը ժամանակին բազմիցս փրկել էր օտարների տիրապետությունից: Նրանք, շարունակում է Պատկանյանը, թեթևամտորեն զոհեցին թագավորական իշխանությունը (յոսքը Արշակունիների մասին է... Հ.Հ.)՝ չստեղծելով իրենց համար ազգային և քաղաքական մի այլ կառույց, որի շուրջ կարող էր համախմբվել ժողովուրդը: Այդ կարճատես քաղաքականության հետևանքներն իրենց սպասեցնել չտվեցին...»¹⁰:

Ուշագրավ են նաև Պատկանյանի՝ հայ ազդեցիկ նախարարական տներին տրված բնութագրերը: «Արծրունիները և Մյունիները, գրում է նա, որոնց տիրությունները մոտ էին Պարսկաստանին, մյուսներից ավելի հաճախակի էին իրենց հենարանը գտնում պարսկական արքունիքում: Բազրատունիները հարստություն էին կուտակում ու ընդարձակում տիրությունները և իրենց հեռու էին պահում հասարակական գործերից: Նրանք ձգտում էին, որքան կարելի է՝ քիչ մասնակցություն ունենալ պատերազմներին, որոնք ծվատում էին Հայաս-

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 7:

տանն այդ ժամանակ: Բոլոր այս տոհմերը ձգտում էին թագավորական տիտղոս ստանալ Պարսկաստանից ոչ թե նրա համար, որ իրենց իշխանության տակ միավորեն հայկական հողերը, նրանց փառասիրությունը չէր կարող այդքան հեռու գնալ, այլ միայն նրա համար, որպեսզի բարձրացնեն իրենց տոհմը և կրեին բաղձալի թագը»¹¹: Անշուշտ, Պատկանյանը չափից ավելի խտացված է ներկայացնում իրողությունը, սակայն նրա խորհրդածություններում ուսանելի մտքեր կան: Հայագետն օրինակ է բերում Վասակ Սյունեցուն, որը, նրա կարծիքով, «այդպես էլ չհասավ իր նպատակին, քանի որ նրա հավակնությունները բացահայտվեցին, և նա ընկավ միայն այն պատճառով, որ չկարողացավ գործը կազմակերպել, ինչպես հարկն է»: Այս ամենից հետո ափսոսալ կարելի է, որ հայոց պատմության հին շրջանին նվիրված պատմագիտական մեր աշխատություններում գրեթե քննարկված չեն Պատկանյանի հետազոտության այս արդյունքները:

Ժամանակաշրջանի այս ամփոփ ներկայացումից հետո հեղինակն այնուհետև անցնում է հայ պատմական գրականության քննական վերլուծությանը: «Հինգերորդ դարի պատմիչները, ստանալով հունական կրթություն, բացառությամբ Եղիշեի և Ղազար Փարպեցու, սովորություն ունեին պատմական իրադարձությունները շարադրել որքան կարելի է չոր և համառոտ, խուսափելով այն ամենից, որոնք նրանց կարծիքով, կարող էին զվարճալի հետաքրքրաշարժություն առաջացնել ընթերցողի մեջ: Նրանց պատմություններում ընթերցողը նշանավոր իրադարձության մանրամասների չի հանդիպում... հատկապես, երբ այն վերաբերում է հեթանոսական ժամանակներին»¹²: Որքան նկատում ենք, հեղինակը քննադատական վերաբերմունք ունի հայ պատմիչների նկատմամբ: Հայ պատմիչներին իր հիմնական առարկությունը Պատկանյանը բացատրում է նրանով, որ «պատմական շարադրանքների մեծ մասն իր մեջ ներառում է միայն փաստերի մերկ թվարկում, որոնք դասավորված են ժամանակագրական կարգով»¹³: Որպես թերություն, հեղինակը նշում է նաև, որ «շարադրանքներում պակասում է հիմնականը՝ հաղորդած տեղեկությունների և իրադարձությունների ներքին կապը»¹⁴: Այս առումով Պատկանյանն առանձնացնում է միայն Փավստոս Բուզանդին, որի շարադրանքում, նրա կարծիքով, «ամեն ինչ պարզ է ու հստակ... նրա երկում մենք հանդիպում ենք Հայաստանի ներքին դրության հետաքրքիր և վառ գույներով նկարագրված մանրամասների: Փավստոսը պատմությունը գրել է այնպես, ինչպես կարող էին ըմբռնել նրա ժամանակակիցները, ովքեր չէին ստացել հիմնավոր կրթություն... Հնարավոր է, որ Փավստոսի նկարագրած ոչ բոլոր փաստերն են պատմականորեն հավաստի, սակայն ներկայացված դարաշրջանի ընդհանուր բնութագիրը և Հայաստանի ներքին կյանքը ավելի մոտ է իրականին, քան մյուս պատմիչների շարադրանքում»¹⁵:

Պատկանյանն այնուհետև, հանգամանորեն ներկայացնելով Եվրոպայի հայագետներին և նրանց կատարած շնորհակալ գործը հայոց պատմության ուսումնասիրության գործում, հատուկ անդրադարձ է կատարում Ռուսաստանում հայագիտության վիճակին: Նա անհանգստացած է, որ Ռուսաստանում հայագիտությամբ զբաղվողները մեծ մասամբ հայեր են. «Ռուսաս-

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 9:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 10:

տանի ընթերցող հասարակայնությունը անուշադրությամբ է վերաբերվում այն ամենին, ինչն առնչվում է հայոց լեզվին, պատմությանն ու գրականությանը... նույնիսկ գիտնականներն ու մասնագետները, որոնցից կարելի է սպասել ակտիվ հետաքրքրություն, ամմասն են մնացել այդ հարցերի հետազոտության խնդրում...»¹⁶։ Եվ որպես մասնագիտական օգնություն, հեղինակը, այնուհետև, ռուս ընթերցողին հանգամանորեն տեղեկացնում է, թե որտեղ կարելի է ծանոթանալ հայ պատմիչների գործերին։ Նա ըստ դարերի ներկայացնում և մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ պատմիչների մասին. թե ինչ և ինչի մասին են գրել, և, որ կարևոր է, որտեղ են պահվում դրանց բնօրինակները, որ լեզուներով են թարգմանվել։ Պատկանյանն այստեղ ներկայացնում է շուրջ վաթսուսու պատմիչների՝ Եվսեբիոսից սկսած մինչև Չամչյան։

Ոչ ծավալուն, սակայն բավական արժեքավոր է 1884թ. գրված «Խորենացու ժամանակագրությունը» հոդվածը։ Պատկանյանը զբաղվեց նաև Խորենացուն վերագրվող՝ նշանավոր «Աշխարհացոյցի» թարգմանությամբ և նրա մեկնաբանումով։ Գիրքը հրատարակվեց 1877թ.՝ «Յոթերորդ դարի հայոց աշխարհագրությունը, որը վերագրվում է Մովսես Խորենացուն» խորագրով։ Հայագետն այստեղ հատուկ նշում է «Աշխարհացոյցի» կարևորությունը Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդների պատմության համար։ Իհարկե, Պատկանյանից առաջ, «Աշխարհացոյցը» արդեն թարգմանվել էր լատիներեն (Լոնդոն, 1736թ.), ապա և ֆրանսերեն լեզվով. վերջինիս թարգմանիչը նշանավոր հայագետ Սեն-Մարտենն էր (Փարիզ, 1819թ.)։ Նա առաջինը կասկածեց «Աշխարհացոյցի»՝ Մ. Խորենացուն հեղինակությունը։ Հեղինակն օգտվելով «Աշխարհացոյցի» վերջին տարիների հայկական հրատարակություններից և միաժամանակ քննարկելով ու վերլուծելով բոլոր ենթադրություններն ու խորհրդածությունները, ի վերջո, «Աշխարհացոյցը» վերագրում է յոթերորդ դարի հռչակավոր մաթեմատիկոս և տիեզերագետ Անանիա Շիրակացուն։

Մեծ են Պատկանյանի ծառայությունները հայագիտության զարգացմանը։ Դժվար է նշել թեկուզ և մեկ աշխատանք, որում հեղինակը կանգնած չլիներ հետազոտողի իր բարձունքում։ Գիտական ցանկացած հարց նա ուսումնասիրում էր հնարավորին չափ խորն ու մանրամասն։ Իբրև արևելագետ՝ Պատկանյանը բավական հայտնի էր Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս։ Նա գիտական շատ ընկերությունների և խորհուրդների անդամ էր և որպես Մ. Պետերբուրգի համալսարանի պատվիրակ, մասնակցել է եվրոպական արևելագետների մի շարք համագումարների։ 1885թ. Զ. Պատկանյանը ընտրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։ Նրա որոշ աշխատանքներ թարգմանվել են ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով։

Անվանի հայագետը մահացավ ուժերի ծաղկուն շրջանում՝ 1889թ., 56 տարեկան հասակում, երբ դեռ գիտական հասարակայնությունը շատ սպասելիքներ ուներ նրանից։ «Պատկանովի մահով, - գրում էր նրա աշակերտ Գր. Խալաթյանը, - աշխարհը կորցրեց ոչ միայն գիտնականի, որը կայուն և պատվավոր տեղ էր գրավում հայագետների շրջանում, այլև նվիրյալ իր արևելագետին»¹⁷։

¹⁶ Նույն տեղում, էջ 15-16։

¹⁷ Տե՛ս Գր. Խալաթյան, Два армениста. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, с. 191.

Զ. Պատկանյանի գիտական ժառանգությունը սույլ իրենը չէր, այլ հայագիտության զարգացման մի ամբողջ ժամանակաշրջանի նշանախեցերից մեկն էր:

К ИСТОРИОГРАФИЧЕСКОМУ НАСЛЕДИЮ КЕРОВБЕ ПАТКАНЯНА.

А. Ж. ОГАНЕСЯН

Резюме

Во второй половине XIX в. в арменоведении достойным последователем и продолжателем дела Мкртыча Эмина был К. Патканян (Патканов). Он обогатил арменоведение новым содержанием, рассматривая историю Армении в общем контексте востоковедения. В исследованиях историографического характера Патканян ставил целью скорректировать и сделать более доступным те сведения армянских историков, которые относились к истории соседних с Арменией народов.

Велики заслуги Патканяна в развитии арменоведения в России. Как востоковед он был хорошо известен в России и за ее пределами, участвовал во многих форумах европейских востоковедов. Некоторые труды Патканяна переведены на немецкий и французский языки.